

**ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ**  
**ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՏՕՆԵՑ ՏՈՅՄԻԿ ՄԹՆՈՒՈՐՏԻ ՄԷՋ**

**- ԱԶԳ. ԲԱՐԵՐԱՐ ՏԻԿԻՆ ԱՇԽԵՆ ՓԻԼԱՎԵԱՆ ԶԻՐԸՆԿԱԼԵՑ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ**

Բարեկենդանը մեր եկեղեցւոյ տօնացոյցին մէջ իւրայատուկ տօն մըն է եւ կը նշուի Մեծ Պահոց նախօրեակին: Ըստ հայկական մեր ավանդութեանց, անհկա զուարթ պահ մը կը շնորհէ տօնակատարողներուն եւ առիթ կ'ընծայէ վայելելու տոհմիկ ճաշատեսակներ, զուարճանալու՝ հաւաքական հանդիսութիւններով ու տօնախմբութիւններով:

Արեւմտեան մեր Թեմի տարիներու ավանդութեան համաձայն, այս տարի եւս, Բարեկենդանի տօնին առիթով կազմակերպուած էր հաճելի երեկոյ մը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին: Ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս, ազգային բարերար Տիկին Աշխէն Փիլավեան հիւրընկալեց ճաշկերոյթը:

Խրախճանական բնոյթով երեկոն տեղի ունեցաւ Կիրակի, 26 Փետրուար 2006ի երեկոյեան ժամը 5ԷՆ սկսեալ, Ս. Նահատակաց եկեղեցւոյ կից «Աւետիսեան» սրահին մէջ: Մասնակից եղան անելի քան 400 հանդիսականներ: Ներկայ էին Թեմիս հոգեւորականաց դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Վարչութեան, երեսփոխանական ժողովի անդամներ, ծխական շրջաններու ներկայացուցիչներ եւ Ազգ. Առաջնորդարանի բարերարներ ու բարեկամներ:

Մշակուած էր կոկիկ յայտագիր մը: Զանդիսավարութիւնը վստահուած էր Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամներէն Տիկին Զնար Գորթոշեանի, որ ձեռնհասօրէն կատարեց այս հաճելի պարտականութիւնը: Ան առաջին հերթին սեղմ բացատրութիւն մը տուաւ այս զուարթ տօնին մասին, որ թէեւ միայն հայերուս իւրայատուկ չէ, սակայն անհկա ստացած է հայկական տոհմիկ դիմագիծ: Ան վեր առաւ նմանօրինակ տօներու ժողովրդականացման ու կազմակերպման մէջ Ազգ. Առաջնորդարանի դերը, ապա հրաւիրեց Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը, որպէսզի աղօթքով կատարեն երեկոյթին բացումը:

Աղօթքէն ետք, Առաջնորդ Սրբազանը ուղղեց սեղմ պատգամ մը. ան շնորհակալութեան խօսք ուղղեց երեկոյթին հիւրընկալ Տիկին Ա. Փիլավեանի, «օր իր կարգին գեղեցիկ ավանդութեան մը վերածած է այս ձեռնարկին հիւրընկալումը», ապա նաեւ՝ գնահատեց բոլոր ներկաները, որոնք կը զօրակցին Ազգ. Առաջնորդարանիս ու մասնակից կ'ըլլան նմանօրինակ ձեռնարկներու յաջողութեան: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ յառաջիկայ շաբաթներուն պահեցողութեան դիմող հաւատացեալներուն ուխտը ընդունելի ըլլայ Աստուծոյ:

Տիկնանց Օժանդակ Մարմինին անունով բարի գալուստի խօսք արտասանեց Տիկին Սալբի Սրուրեան: Յայտագիրը զարգացաւ ճաշի զուգընթաց: Սրահին մէջ հաճելի մթնոլորտի ստեղծման մեծապէս նպաստեցին մանուկներուն տրամադրուած գունագեղ դիմակները: Զայկական պարերն ու երգերը, իրենց կարգին, գոյն տուին երեկոյին: «Երամ» պարախումբը ներկայացուց քանի մը պարային պատկեր, իսկ սիրուած երգիչ Րաֆֆի Խարտալեան հայկական ժողովրդային ու տոհմիկ երգերով իր նպաստը բերաւ խանդավառ մթնոլորտին

տարածման: Հանդիսավարը մէջ ընդ մէջ օգտակար բացատրութիւններ տուաւ Բարեկենդանի տոհմիկ ասանդութեանց ու սովորութեանց մասին, որոնք կ'ընդգրկեն որոշ արարողութիւններ ու իւրայատուկ ճաշատեսակներ:

Օրուան պատգամաբերն էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Արտակ Քիւյ. Տեմիրճեան, որ բացատրեց Բարեկենդանի տօնին իմաստն ու անդրադարձաւ դարերու ընթացքին զայն մարմնաւորող ասանդութեանց:

Տեղի ունեցաւ վիճակահանութիւն, ու ներկաներէն ոմանք բախտաւորուեցան գեղեցիկ նուէրներով:

Աւելի քան երեք ժամ հայկական տոհմիկ ու մտերմիկ մթնոլորտ մը վայելելէ ետք, ներկաները տուն վերադարձան հայկականութեամբ վերալիցքաւորուած:

## **WESTERN PRELACY CELEBRATES PAREGENTAN WITH A TRADITIONAL DINNER**

### **- PRELACY SPONSOR MRS. ASHKHEN PILAVJIAN HOSTED THE DINNER**

In our church calendar, Paregentan is a special holiday that is celebrated on the eve of Lent. According to our tradition, this is a time of joy when everyone gathers to enjoy the traditional feast and festivities.

As is customary in the Western Prelacy, a special dinner was planned this year for Paregentan, under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Ladies Auxiliary. As in previous years, Mrs. Ashkhen Pilavjian once again hosted the dinner.

The event took place on Sunday, February 26, 2006 at 5:00 p.m. at the «Avedissian» Hall of Holy Martyrs Church. In attendance were clergy members, Central Executive Committee member Mr. Khajag Dikijian, Prelacy Executive Council members, delegates, representative of various parishes, and over 400 Prelacy sponsors and friends.

Prelacy staff member Mrs. Knar Kortoshian, the emcee of the evening, welcomed the guests, after which she briefly gave a background on the history of Paregentan noting that Paregentan is not a holiday unique to Armenians but we have modified it to give it a unique Armenian character. She also highlighted the role of the Prelacy in organizing similar traditional events throughout the year in order to be connected with our customs and national roots. She then invited the Prelate and clergy members to conduct a prayer officially commencing the evening.

Ladies Auxiliary member Mrs. Salpi Srourian welcomed the guests on behalf of the Ladies Auxiliary, after which dinner was served. During dinner, the atmosphere became even more cheerful as children pranced around with colorful masks and the «Yeram» dance group performing traditional Armenian dances. Singer Raffi Khardalian further added to the cheerful atmosphere with his popular songs. Throughout the course of the evening, Mrs. Kortoshian gave brief facts about Paregentan.

The speaker of the day was Rev. Ardag Demirjian, pastor at St. Mary's Church, who spoke of the meaning of Paregentan and the centuries old traditions associated

with it. The social segment of the evening then continued with music and dancing, with the guests eventually departing filled with joy and delight.